ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ս. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ

Տոների և, ընդհանրապես, մշակութային գանձերի պահպանման գլխավոր երաշխիքը դարձավ 1918 թ. ստեղծված Հայոց Առաջին հանրապետությունը, որը, որպես ազգային պետություն, ոչ միայն կարողացավ նպաստավոր պայմաններ ստեղծել ավանդութային այս տոների գոյատևման համար, այլև ստեղծեց իր պետական տոնական համակարգը։ Իսկ վերջինս ձևավորվեց հիմնականում անցյալի ավանդութային-կրոնական, ինչպես նաև՝ նոր աշխարհիկ բովանդակությամբ տոների հիմքի վրա։

Ազգային զորթոնքի այդ ժամանակահատվածում հանրապետության բնակչության կենցաղում հիմնականում գերակշռում էին այն տոները, որոնք անցած ժամանակաշրջանի վերջերին տարածված էին պատմական Հայաստանի բոլոր բնագավառներում։ Դրանք գլխավորապես ավանդութային-կրոնական տոներն էին, որոնք Հայաստանի խորհրդի կողմից 1919 թ. հունվարին սահմանվեցին որպես «Համընդհանուր պետական տոներ՝ միաժամանակ ընդունելով նրանց եկեղեցական հատուկ կարգավիճակը։ Ահա այդ տոների ցանկը. Նոր տարի—Ամանոր, Քրիստոսի ծնունդ և մկրտություն, Տեառն ընդառաջ, Վարդանանց, Բարեկենդան (Բարեկենդանի շաբաթ), Լուսավորչի մուտն ի Վիրապ, Զատիկ (Զատկի երկուշաբթին և երեքշաբթին), Համբարձում և Թարգմանչաց[1]։

Նշվում էին նաև տոներ, որոնք ծագումով կապված էին հանրապետական և միջազգային նշանակություն ունեցող պետական-քաղաքական խոշոր իրադարձությունների հետ։ Այդ խմբի տոներից էին. Հայաստանի Հանրապետության պառլամենտի բացման օրը (օգոստոսի 1)[2], Հայաստանի Հանրապետության անկախության օրը (մայիսի 28)[3], ինչպես նաև Աշխատավորների (մայիսի 1)[4] և Ռուսական հեղափոխության[5] (փետրվարի 27, Նոր տոմարով՝ մարտի 12) օրերը։

Տոների առթիվ աշխատավորներին երբեմն տրվում էր մեկամսյա նպաստ (կապված զատկական տոների հետ)[6]։ Ելնելով ժամանակի ռազմա-

---

1 Закон о праздничных днях. Утвержден Советом Армении 1-го января 1919 г. (Հայաստանի պատմության պետական կենտրոնական արխիվ (ՀՊՊԿԱ), թ. 6, դ. 14, ց. 1, ֆ. 207, էջ 6)։ Օրենք Հայաստանի Հանրապետության մեջ սահմանված տոների մասին. Հաստատված է Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 17-ի նիստում (Կառավարության լրաբեր, 12. III. 1919, էջ 1—2)։

2 Հայաստանի խորհրդի հունվարի 17-ի նիստը՝ տոներ սահմանելու մասին (Ժողովուրդ, 5. II. 1919, էջ 4)։

3 Վ. Աղաղոյան, Տարեդարձը Վաղարշապատում (Ժողովուրդ, 8. VII. 1919, էջ 4), Գ. Սինանյան, Անկախության տոնը Նոր Բայազետում (Ժողովուրդ, 10. VI. 1920, էջ 3—4), Մայիսի 28-ի տոնակատարությունը (Ժողովուրդ. 26. V. 1920, էջ 3), Վ. Հովսեփյան, Հրետանային համազարկ (ականատեսի հուշերը) (Ավանդարդ, 30. V. 1990), Հայաստանի անկախության տոնը Կ. Պոլսում (Ժողովուրդ, 15. II. 1920, էջ 2), Ա. Տուլյան, Սարդարապատյան խրամներ և մայիսյան տոնակատարություն (Դրոշակ, 18. I. 1989, էջ 12)։

4 Մայիսի 1-ը Երևանում (Ժողովուրդ, 8. V. 1920, էջ 2), Կառավարական հաղորդագրություն Ալեքսանդրապոլի դեպքերի մասին (Ժողովուրդ, 15. V. 1920, էջ 1—2)։

5 Հայաստանի խորհրդի հունվարի 17-ի նիստը՝ տոներ սահմանելու մասին (Ժողովուրդ, 5. II. 1919, էջ 4)։

6 Կառավարության լրաբեր, 22. VI. 1920, էջ 2։

քաղաքական անցուդարձերից՝ պետությունը մեծ տեղ էր տալիս սերունդների ոգեմտհայրենասիրական դաստիարակությանը։ Այս կապակցությամբ առանձնակի նշանակություն ունեին նորաստեղծ «Բանակի» (դեկտեմբերի 19—21)[7] և ավանդական «Վարդանանց»[8] տոները*։

Հանրապետության պետական տոնացույցում հատուկ տեղ էր հատկացվել նաև Հայաստանում բնակվող այլ էթնիկ ընդհանրություններին։ Մասնավորապես հատուկ տոներ էին սահմանվել ռուսների համար (Ավետում, Վերափոխումն Աստվածածնի, Խաչվերաց տոն, Նիկողայոս Հրաշագործի տոն, Պողոս Առաքյալի և Հովհաննես Մկրտչի (Կարապետ) օրեր, ինչպես նաև՝ Քրիստոսի ծնունդ և Մկրտություն, Բարեկենդան, Զատիկ, Համբարձում, Ռուսական մեծ հեղափոխությանը և Աշխատավորների միջազգային համերաշխությանը նվիրված տոները)։

Հայաստանի Հանրապետությունը հատուկ տոներ և հիշատակի օրեր էր սահմանել նաև շիա մահմեդականների համար (Իմամ Հուսեյնի տանջանքը և մահը, նրա մահվան 40-րդ օրը, Մուհամմեդ մարգարեի մահը, Մուհամմեդ մարգարեի ծնունդը, Ալիի ծնունդը, Մուհամմեդին մարգարեական կոչման հայտնումը, 12 իմամների ծննդյան օրը, Ալիի վերավորվելու և մահվան օրը, Աստծուց Մուհամմեդին Ղուրանը ուղարկելու օրը, Մուհամմեդի կողմից Ալիին խալիֆ նշանակելը և Նովրուզ-Բայրամի երեք օրերը)[9]։ Ի դեպ, մահմեդականների (մասնավորապես՝ աղերի-թուրքերի) շրջանում իրենց առավել տարածվածությամբ առանձնանում էին «Նովրուզ-Բայրամը» և հատկապես՝ իմամ Հուսեյնի հիշատակի օրը՝ «Մուհարրեմի տոնը»[10]։

Պետք է նշել, որ Հայաստանի Առաջին Հանրապետության պետական տոնացույցում (հատկապես հայերի և ռուսների համար նախատեսված մասում) որոշ բացթողումներ կան։ Պատճառն այն էր, որ նորաստեղծ պետական հաստատությունը՝ խորհուրդները դեռևս չէին հասցրել մշակել իրականությանը համապատասխանող տոնացույցի վերջնական տարբերակը, այլապես, օրինակ, Վարդավառի տոնը չէր բացակայի ընդհանրապես, իսկ Աստվածածնի վերափոխման և Խաչվերաց տոները չէին հայտնվե միայն ռուսների համար նախատեսված հատվածում (այդ երեք տոներն էլ հայերի կենցաղում բավական տարածված էին)։ Գրեթե նույն թերացումները կային նաև ռուսների համար նախատեսված տոների մասում, քանի որ էթնիկ այդ փոքրամասնությանը վերաբերող տոները ևս տոնացույցում ճշգրտորեն չէին խմբագրված (աշխարհիկ և կրոնական տոները այդ պաշտոնապես ընդուն-

---

7 Բանակի օրեր (Ժողովուրդ, 19. XII. 1919, էջ 3), Բանակի օր (Ժողովուրդ, 11. XII. 1919, էջ 1), Դեկտեմբերի 20-ին (Ժողովուրդ, 24. XII. 1919, էջ 2)։

8 Վարդանանց տոնի կատարումը (Ժողովուրդ, 22. II. 1920, էջ 3)։ Վ. Զիլինգարյան, Վարդանանց տոնը Մարգարայում (Ժողովուրդ, 6. III. 1920, էջ 3), Ժողովուրդ, 22. II. 1920, էջ 3—4)։

* Ուշագրավ է, մասնավորապես, հայոց բանակին նվիրված տոնի մուտքն Առաջին Հանրապետության տոնական համակարգ, որն, ըստ իս, պետք է այսօր վերականգնվի դարավերջին կրկին անկախություն ձեռք բերած Հանրապետության (Երրորդ) տոնացույցում, առավել ևս, որ ուղղակիորեն աղգային բանակին նվիրված տոն առ այսօր գոյություն չունի։ [Ի դեպ, այդ գործառույթը Հայաստանում երկար ժամանակ կատարում էր նախկին խորհրդային Բանակի տոնը (Փետրվարի 23), որը որոշակի տրանսֆորմացիայի ենթարկվելով, աստիճանաբար ձեռք բերեց կենցաղային արժեքային նոր հատկանիշներ։ Նույնը վերաբերում է նաև աշխատավորներին նվիրված տոնի (Մայիսի 1) մուտքին Հայոց Առաջին Հանրապետության տոնացույց, որը հետագա տասնամյակների ընթացքում այնքան ամրապնդվեց մեր կենցաղում, որը, չնայած իր աշխարհիկ բնույթին, ձեռք բերեց նույնիսկ ավանդութային-կրոնական տոներին բնորոշ հատկանիշներ։ Այդ տոնը ևս, մեր կարծիքով, պետք է վերականգնվի մեր նոր պետական տոնացույցում]։

9 Закон о праздничных днях... (ՀՊՊԿԱ, թ. 6, գ. 14, ց. 1, ֆ. 207, էջ 6)։ Օրենք Հայաստանի Հանրապետության մեջ սահմանված տոների մասին (նույն տեղում, էջ 2)։

10 Շիաների հանդիսավոր տոնը (Ժողովուրդ, 30. IX. 1920, էջ 2)։

ված փաստաթղթում բավականին խառն են ներկայացված, այսինքն՝ այստեղ էլ չկա տոների հստակ դասակարգում, բացի այդ, այնտեղ նշված չեն կրոնական առանձին տոների՝ Քրիստոսի ծննդի և Մկրտության, Զատկի և այլն ժամկետային տվյալները, որոնք տարբերվում են հայկականից)։

Բոլորի համար (ներառյալ՝ էթնիկ փոքրամասնությունները) պետականորեն հաստատված առանձին տոների կապակցությամբ սահմանվել էին որոշակիորեն կանոնարկված ոչ աշխատանքային օրեր և ժամեր։ Այսպես՝ որոշման համաձայն, բոլոր հիմնարկները պիտի փակվեին, բանվորները և ծառայողները ազատ պիտի լինեին աշխատանքից ամբողջ օրը (երկու ճրագալույցներին, Քրիստոսի ծննդյան, Ռուսական Մեծ հեղափոխության, Զատկի, Աշխատավորների, Հայաստանի Հանրապետության պառլամենտի բացման օրերին)։

Պետք է նշել, որ Հանրապետության տոնացույցի նման կառուցվածքն ինքնին վկայում է նորաստեղծ Հայոց պետության դեմոկրատական էության մասին։

Ինչ վերաբերում է պետական տոնացույցում ռուսական կրոնական և աշխարհիկ (քաղաքական) տոների առկայությունը, ապա այն պայմանավորված էր ինչպես հանրապետությունում ռուսական էթնիկ զանգվածի առկայությամբ (նմանատիպ գործոնի հետ էր կապված նաև մահմեդականների տոների առկայությունը), այնպես էլ Ռուսաստանի հետ քաղաքական, կրոնական, տնտեսական և մշակութային կապերի ավանդույթներով, քանի որ ոչ վաղ անցյալում անկախություն հռչակած հանրապետության բնակիչները ճնշող մեծամասնությամբ ռուսահպատակներ էին։

Այսպիսով, Հայաստանի Առաջին Հանրապետությունում գոյություն ուներ որոշակիորեն ձևավորված տոնական համակարգ, որն արժեքավոր է ինչպես զուտ ազգագրական, այնպես էլ պատմաքաղաքական առումներով, քանի որ այդ տոներն արտացոլում են ոչ միայն հայության այդ հատվածի էթնիկ ավանդույթները, այլև հանրապետության էթնոքաղաքական ռեալ իրավիճակը։ Իսկ դրանք, ըստ էության, նորանկախ պետության արտաքին և ներքին քաղաքական իրավիճակն արտացոլող կարևոր փաստաթղթեր են, որոնք, կարծում ենք, կհետաքրքրեն նաև այդ ժամանակաշրջանով զբաղվող պատմաբաններին*։

---

* Ստորև ներկայացված են Հայաստանի Առաջին Հանրապետության տոնացույց մտած մի քանի տոների ամփոփ նկարագրերը, որոնք տարածված էին կենցաղում և որոնցում միաժամանակ արտացոլված էր հանրապետության ազգամաքաղաքական իրավիճակը։

Այդ նյութն ամբողջությամբ քաղված է տվյալ ժամանակաշրջանի մամուլից.

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆ. Նոր Բայազետ (1920) «...ժամը 10-ից զումայի զուռը հավաքվեց մեծ բազմություն, դրոշակներով և պլակատներով։ Այդտեղից հանդիսավոր թափորը դափ ու զուռնայի ուղեկցությամբ շարժվեց դեպի ռուսումնարանի շենքը, ուր տեղավորված էր զորքը։ Դպրոցի հրապարակում տեղ բռնեցին զորքը, հասարակական, արհեստավորական, աշակերտական միությունները, ամերիկյան որբերը և այլն՝ իրենց ազգային և ինքնուրույն դրոշակներով։ Հոգևորական դասը ժամերգությունից հետո մաղթանք կատարեց։

...Բոլոր ճառերն ուղեկցվում էին որոտընդոստ կեցցեներով, և երաժշտական արկեստը նվաղում էր ազգային հիմնը, իսկ արտիլերիան այդ ժամին երեք անգամ թնդանոթից արձակեց։

...Ապա տեղի ունեցավ զորքերի շքերթ, բոլոր վաշտերին մեկիկ-մեկիկ բարևեց զեներալ Փիրումյանը։

...Ժողովրդի մի մասն ուղեկցեց զորքին դեպի քաղաքի հարավային կողմը գտնվող մի կանաչ մարգագետին, ուր քաղաքի կողմից զորքի համար ճաշ էր պատրաստված։ Ճաշին մասնակցեցին նաև քաղաքացիներ, որոնց շրջանում հանգանակություն էր բացված հատկապես զորքի պատվին ճաշ տալու համար...» (Ժողովուրդ, 10. VI. 1920, էջ 3—4)։

Կ. ՊՈԼԻՍ (1920) «... Այդ նշանավոր պատմական դեպքի առթիվ Կ. Պոլսի հայկական դրամատիկական ընկերությունը շքեղ երեկույթ էր կազմակերպել, որին ներկա են եղել պատ-

րիարք Զտվեն սրբազան, Մեսրոպ Եպիսկոպոս Նարոյանը և հայկական հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Թահիրճյանը։ Թուրքական պետության ներկայացուցիչները այցելել էին պատրիարքին և շնորհավորել Հայաստանի քաղաքական վերածնությունը։ Նույնիսկ, ուրախություն են հայտնել թուրքական շրջագրողները, իհարկե, միայն այն մտքով, որ հայերը կրավականանան միմիայն կովկասյան Հայաստանով և Սև ծովի ափին մի նավահանգիստ պահանջելով...» (Ժողովուրդ, 15. I. 1920, էջ 2)։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՏՈՆ. ԵՐԵՎԱՆ (1920) *«...Հինգշաբթի, Վարդանանց տոնի առթիվ Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու առջև կատարվեց մեծ զորահանդես։ Ժամը 11-ին Երևանի զինվորական մի դումարտակ մուգիկի առաջնորդությամբ բարձրացան Աստաֆյան փողոցով և շարվեցին եկեղեցու առջև։ Քիչ հետո եկան զինվորական նախարարը և գեներալ Նազարբեկյանը, այնուհետև եկան վարչապետ Ա. Խատիսյանը, խնամատարության մինիստրը, պառլամենտի անդամները և ուրիշ պետական բարձրաստիճան անձնավորություններ։ Կատարվեց եկեղեցական արարողություն ի հիշատակ Վարդան զորավարի, որից հետո մինիստր-նախագահը դիմեց զինվորներին հետևյալ ճառով. «Այսօր մեր անկախ հանրապետությունը գոյություն ունի նույնպես մեր քաջարի զինվորների և սպաների թափած արյան գնով և մենք այստեղ հարգում ենք Վարդանանց հիշատակը։ Թեև մենք չենք ստացել այն հողամասերը, որոնք մեր հայրենիքի անբաժան մասն են կազմում, սակայն ես վստահ եմ, որ շուտով հայկական բանակը կմտնի Տաճկահայաստան և կգրավի մինչև Սվազն ու Տրապիզոնը։ Մենք չենք կարող հանդիստ լինել, քանի որ մեր տաճկահալ եղբայրները սպասում են անհամբեր երփիր գնալու։ Մենք չենք կարող անտարբեր լինել, երբ այսօր ստացված վերջին տեղեկությունների համաձայն ազրբեջանյան 1000-ից ավելի զինվորներ տաճկական գեներալների և փաշաների առաջնորդությամբ պատրաստվում են Շուշիից հարձակվել Զանգեզուրի վրա և ուզում են կտրել Ղարաբաղն ու Զանգեզուրը մեղանից։ Հայ զինվորները երբեք թույլ չպիտի տան այդ բանը։*

...Հետո կատարվեց զորանցք և հանդեսը վերջացավ...» (Ժողովուրդ, 19. XII. 1919, էջ 3)։

ԲԱՆԱԿԻ ՕՐ. ԵՐԵՎԱՆ (1919) *«...Երևանում դեկտեմբերի 19, 20 և 21-ին Բանակի օրերը կտոնվեն հետևյալ կարգով. Ուրբաթ, դեկտ. 19-ին կկատարվի հանդանակություն իրերով։ Քաղաքի փողոցներում կշրջեն հատուկ հավաքող սայլերը, որոնց կուղեկցեն լիազորները։ Շաբաթ, դեկտ. 20-ին, ցերեկով կվաճառվեն տոնի պատրաստ օրանիշները։ Եռեկոյան պառլամենտի դահլիճում կկայանա շքեղ երեկույթ, որ կազմակերպում են կանայք։ Կիրակի, դեկտ. 21-ին, ցերեկով կկայանա զորահանդես և հրապարակավ ժողովներ, կվաճառվեն «Բանակի օր» թերթը և նշաններ։ Երեկոյան կկայանա Հայաստանի Գրական ընկերության դատախոսությունը պառլամենտի դահլիճում։*

...Քաղաքացինե՛ր, Բանակի օրերին զարդարեցեք քաղաքը դրոշակներով ու գորգերով։ Սրտով միացեք մեր քաջարի զորքի հետ և առատաձեռն նվերներով հաջողությամբ պահակեցեք տոնը...» (Ժողովուրդ, 19. XII. 1919, էջ 5)։

ՄԱՅԻՍԻ 1 (1920) *«...Հայաստանի կառավարության որոշման համաձայն ներքին գործոց պ. մինիստրը հայտնել է բոլոր տեղական աղմինիստրատիվ հիմնարկություններին տանել հանդիսավորապես Մայիսի 1-ը։ Տեղական վարչությունների պարտքն է քաղաքներում և գյուղերում ակտիվ մասնակցություն ցույց տալ բանվորական այդ մեծ տոնի օրը։ Միլիոնանոց պիտի քաղաքները զարդարել տա։ Ներքին գործոց պ. մինիստրը շնորհավորում է կառավարության կողմից Մայիսի 1-ի տոնը և հայտնում կառավարության ջերմ վերաբերմունքը բանվորությանը և գյուղացիությանը...» (Ժողովուրդ, 1. V. 1920, էջ 4)։*

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ (1920) *«...Ադրբեջանի հեղաշրջումից հետո բոլշևիկների անդրկովկասյան կոմիտեն որոշել է հեղաշրջում առաջ բերել նաև Վրաստանում և Հայաստանում։ Այդ նպատակով դրսից Հայաստան էին եկել գործակալներ խոշոր գումարներով։ Մայիսի մեկը նրանք նշանակել էին իրենց գործունությունն իրագործելու օր։*

...Նույն Մայիսի 1-ին Հայաստանի կառավարությունն ստանում է Ադրբեջանի «կարմիր» կառավարությունից գոնհիկ վերջնագիր, որով պահանջվում էր երեք օրվա ընթացքում պարպել Ղարաբաղն ու Զանգեզուրը։ Ադրբեջանական զորքերը մտադիր էին միանալ Մուստաֆա փաշա Քեմալի զորքերի հետ...» (Ժողովուրդ, 15. V. 1920, էջ 1—2)։

ПРАЗДНИЧНАЯ СИСТЕМА ПЕРВОЙ АРМЯНСКОЙ РЕСПУБЛИКИ

С. С. МКРТЧЯН

Резюме

Праздничная система населения первой республики в основном представлена двумя группами праздников. Первая группа объединяет различные праздники традиционно религиозного или церковного содержания, вторая—светского или государственного характера. В первой группе присутствует не только традиционная празднично-обрядовая система основного этноса (армян), но и этнических и религиозных меньшинств, что свидетельствует о демократическом характере Первой республики. Следующая группа полностью обусловлена событиями республиканского и международного масштаба. В ней достаточно ощутимо русское влияние, что определяется как наличием в Армении русского этнического массива, так и традициями экономических, политических, религиозных и культурных связей России и Восточной Армении.